Թեմատիկ պլանավորում

«Հայոց պատմություն»

7-րդ դասարան

Շաբաթական 1,5 ժամ

Տարեկան 51 ժամ

**Դասագրքեր՝**

1. **Հայոց պատմություն (Միջին դարեր ): Դասագիրք հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար / Վ. Բարխուդարյան, Ա. Հակոբյան, Հ. Հարությունյան և ուրիշ./ -Եր., «Մանմար», 2019**

2. **Հայոց պատմություն (Միջին դարեր): Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 7-րդ դասարանի համար / Աշոտ Մելքոնյան, Էդուարդ Դանիելյան, Գագիկ Հարությունյան, Հակոբ Մուրադյան/ Երևան, Զանգակ հրատ. 2019**

**Թեմատիկ պլանը կազմող ուսուցիչներ՝**

Հասմիկ Մարգարյան՝ ԿԶՆԱԿ հիմնադրամի մասնագետ
Անահիտ Մայյան՝ Կոտայքի մարզ, Մեղրաձորի միջնակարգ դպրոց
Արևհատ Աբգարյան ՝ Տավուշի մարզ, Դիլիջանի թիվ 4 հիմնական դպրոց
Անահիտ Բաղդասարյան՝ Երևանի Դ. Վարուժանի թիվ 89 հիմնական դպրոց
Մերի Մանուկյան՝ Երևանի Արշ. Շավարշյանի անվան թիվ 40 հիմնական դպրոց
Շուշան Վարդանյան ՝ Երևանի Գ. Մահարու անվան թիվ 176 հիմնական դպրոց

**Պատասխանատու՝** ԿԶՆԱԿ – ի ուսումնական բնագավառների մշակման և զարգացման բաժնի մասնագետ Հասմիկ Մարգարյան

<table>
<tr><td colspan="4">Ներածություն</td></tr>
<tr><td colspan="3">Նպատակ</td><td>Նպաստել «Հայոց պատմություն» առարկայի 7-րդ դասարանի բովանդակային հիմնական նյութի, հայոց պատմության IV -XVII դարի կեսերն ընկած ժամանակահատվածի մասին պատկերացումների ձևավորմանը:</td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ</td><td>Կարողանա՝<br>- Ընդհանուր գծերով ներկայացնել 7-րդ դասարանի «Հայոց պատմություն» առարկայի ուսումնական տարվա ընթացքում անցնելիք նյութի ընդհանուր բովանդակությունը,<br>- Թվարկել հայ ժողովրդի պատմության IV -XVII դարի կեսերն ընկած ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները:<br>- ձևակերպել միջին դարերի պարբերացումը, բնութագրել ժամանակաշրջանը</td></tr>
<tr><td>Ժամ</td><td colspan="2">Էջ</td><td>Դաս</td></tr>
<tr><td>1</td><td>Չանգակ<br>3-4</td><td>Մանմար<br>3-6</td><td>Ներածություն</td></tr>
<tr><td colspan="4">Բաժին 1<br>Հայաստանը վաղ միջնադարում<br>/18 ժամ/</td></tr>
<tr><td colspan="4">Գլուխ /Թեմա II<br>Ավատատիրության հաստատումը և քրիստոնեության տարածումը Հայաստանում<br>/ 3 ժամ/</td></tr>
<tr><td colspan="3">Նպատակ</td><td>Նպաստել Հայաստանում ավատատիրության հաստատման և քրիստոնեության տարածման մասին գիտելիքների ձեռքբերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունները, փաստերը, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, բնութագրելու, համեմատելու, եզրահանգումներ անելու, տեսակետ հայտնելու, գնահատելու, արժևորելու կարողությունների ձևավորմանը:</td></tr>
</table>

| Վերջնարդյունքներ | Կարողանա՝<br>– ներկայացնել և բացատրել ավատատիրության էությունը ավատատիրական հասարակության հիմնական դասերը, բանակի կառուցվածքը<br>– թվարկել հողատիրության ձևերը, գործակալությունները<br>– բացատրել «Գահնամակ» և «Զորանամակ» հասկացությունները<br>– բնութագրել Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներին և նրանց գործունեությունը<br>– արժևորել քրիստոնեության և հայոց եկեղեցու դերակատարությունը մեր պատմության ընթացքում |
|---|---|

| Ժամ | Էջ | Դաս |
|---|---|---|
| 1 | 6–8 | §1.Ավատատիրական հարաբերությունների ձևավորումը Հայաստանում /Զանգակ/ |
| | 7–10 | Դաս 1.Ավատատիրության ձևավորումը Հայաստանում /Մանմար/ |
| 1 | 9–10 | §2.Պետական կառավարման համակարգը/Զանգակ/ |
| | 10–11 | Դաս 2.Պետական կառավարման համակարգը/Մանմար/ |
| 1 | 11–14 | §3.Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն/Զանգակ/ |
| | 12–15 | Դաս 3.Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն/Մանմար/ |

**Գլուխ /Թեմա/ II**

**Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը**

**301–428 թվականներին: /«Զանգակ»/**

**Պայքար թագավորական իշխանության ամրապնդման համար: /«Մանմար»/**

**/ 4 ժամ/**

| Նպատակ | Նպաստել Արշակունյաց արքայատոհմի վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, թագավորական իշխանության ամրապնդման համար պայքարի, զարգացման ընթացքի ու անկման հետ կապված կարևորն իրադարձությունները, փաստերը բացատրելու, նշանավոր արքաների, գործիչների գործունեությունը համեմատելու, գնահատելու կարողությունների ձևավորմանը: |
|---|---|
| Վերջնարդյունքներ | *Կարողանա՝*<br>– Ներկայացնել և բացատրել Արշակունյաց արքայատոհմի նշանավոր արքաների, Հայաստանի բաժանումների և Արշակունի–ների |

| | | |
|---|---|---|
| | | թագավորության թուլացման և անկման հետ կապված կարևոր փաստերը:<br>– Պարզաբանել Արշակունիների արքայատոհմի ժառանգորդ դառնալու առանձնահատկու-թյունները: |
| Ժամ | Էջ | Դաս |
| | 15-19 | [§ 4. Հայաստանի հզորացումը: /Զանգակ/] |
| | 17-19 | [Դաս 1. Թագավորական իշխանության ամրապնդման քաղաքականությունը: /Մանմար/] |
| 1 | 20-23 | [§ 5-6. Պայքար Հայաստանի ինքնիշխանության պահպանման համար: /Զանգակ/] |
| | 20-23 | [Դաս 2. Արշակ II-ի և Պապ թագավորի ջանքերը կենտրոնական իշխանության ուժեղացման ուղղությամբ: /Մանմար/] |
| 1 | 23-24 | [§ 5-6. Պապ թագավոր: /Զանգակ/] |
| | 23-25 | [Դաս 2. Պապ թագավորը և Մեծ Հայքի թագավորության հզորության վերականգնման նրա փորձերը: /Մանմար/] |
| 1 | 26-28 | [§ 7. Արշակունյաց թագավորության անկումը: /Զանգակ/] |
| | 27-31 | [Դաս 3.Մեծ Հայքի թագավորության թուլացումն ու անկումը: /Մանմար/] |
| 1 | **Կրկնություն** | |

**Գլուխ /Թեմա/ III**

**Հայ ժողովրդի ազատագրական պայքարը V դարում**

**/ 3 ժամ/**

| | |
|---|---|
| **Նպատակ** | Նպաստել՝ 5-րդ դարում հայ ժողովրդի ազատագրական պայքարի մասին գիտելիքների ձեռքբերմանը, կարևոր իրադարձությունները, փաստերը, գործիչների գործունեությունը բացատրելու, համեմատելու, դիրքորոշում հայտնելու և 5-րդ դարի ազատագրական պայքարի դերը հայ ժողովրդի պատմության մեջ արժևորելու կարողությունների զարգացմանը: |
| **Վերջնարդյունքներ** | **Կարողանա՝**<br>– Ներկայացնել Վարդանանց և Վահանանց պատերազմների ժամանակը, կարևոր դրվագները, ղեկավարներին<br>– Վարդանանց և Վահանանց պատերազմների դեպքերը ներկայացնել ժամանակագրական |

| | | |
|---|---|---|
| | | - արժևորել 5-րդ դարի ազատագրական պայքարի դերը հայ ժողովրդի պատմության մեջ |
| Ժամ | Էջ | Դաս |
| 2 | 29-36 | § 8-9 Վարդանանց պատերազմը /Զանգակ/ |
| | 34-42 | Դաս 1 Պարսից քաղաքականությունը Հայաստանում /Մանմար/<br>Դաս 2 Վարդանանց պատերազմը: Ավարայրի ճակատամարտը /Մանմար/ |
| 1 | 38-41 | § 10 Վահանանց ապստամբությունը /Զանգակ/ |
| | 43-47 | Դաս 3 Վահանանց ապստամբությունը/ Մանմար/ |

**Գլուխ /Թեմա/ IV**
**Հայաստանը VI- IX դարերում**
**/4 ժամ/**

| | |
|---|---|
| **Նպատակ** | Նպաստել՝ VI- IX դարերի հայոց պատմության վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, Հայաստանի ինքնավարության վերականգնման հետ կապված հիմնական փաստերը, իրադարձությունները բացատրելու,համեմատելու, տարանջատելու, գնահատելու կարողությունների զարգացմանը: |
| **Վերջնարդյունքներ** | **Կարողանա՝**<br>- Ներկայացնել և բացատրել VI դարում Հայաստանում Բյուզանդիայի վարած քաղաքականության և հակաբյուզանդական ելույթների ու ապստամբությունների հետ կապված կարևոր փաստերը, դեպի Հայաստան արաբական արշավանքների ժամանակը, 652 թ. հայ-արաբական պայմանագրի կնքման վայրը, կնքող անձանց, Հայաստանի ինքնավարության վերականգնման հետ կապված հիմնական փաստերը<br>- թվարկել Հուստինիանոս I-ի ռեֆորմները, Արևելյան Հայաստանի վարչական ու տնտեսական կյանքում պարսից արքունիքի կատարած փոփոխությունները, ազատագրական պայքարի առանձին դրվագներ,<br>- համեմատել Մամիկոնյան և Բագրատունի իշխանական տոհմերի դիրքորոշումն ազատագրական պայքարի ուղիների վերաբերյալ |

| Ժամ | Էջ | Դաս |
|---|---|---|
| 1 | 42-46 | § 11.Հայաստանը VI դարում /Զանգակ/ |
| | 48-57 | Դաս 1.Արևմտյան Հայաստանը VI դարում/ Մանմար/<br>Դաս 2.Արևելյան Հայաստանը VI դարում /Մանմար/ |
| 1 | 47-51 | § 12 Հայաստանը VII դարում/Զանգակ/ |

| | | |
|---|---|---|
| | 57–60 | Դաս 3. Արաբական խալիֆայությունը և Հայաստանը: /Մանմար/ |
| 1 | 52–56 | § 13. Հայ ժողովրդի պայքարը արաբական գերիշխանության դեմ: /Զանգակ/ |
| | 60–65 | Դաս 3. Արաբական խալիֆայությունը և Հայաստանը: /Հայաստանն արաբական խալիֆայության կազմում//Մանմար/ |
| 1 | 57–61 | §14. Հայաստանի ինքնավարության վերականգնումը /Զանգակ/ |
| | 83–87 | Դաս 3. Արաբական խալիֆայությունը և Հայաստանը: / Հայաստանի անկախության վերականգնումն ու ամրապնդումը /Մանմար/ |

| Գլուխ /Թեմա V<br>Հայկական մշակույթը V–IX դարերում<br>/4 ժամ/ | | |
|---|---|---|
| Նպատակ | | Նպատել՝ V–IX դարերի Հայկական մշակույթի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, կարևոր ձեռքբերումները բացատրելու, համեմատելու, վերաբերմունք արտահայտելու, հայոց գրերի գյուտը և ոսկեդարյան մշակույթի ձեռքբերումները արժևորելու կարողությունների զարգացմանը: |
| Վերջնարդյունքներ | | **Կարողանա՝**<br>– Ներկայացնել և բացատրել հայոց գրերի ստեղծման ժամանակը, գրերի գյուտին աջակցող պետական գործիչներին, V – IX դդ. կրթության, գիտության և արվեստի հետ կապված կարևորագույն փաստերը,<br>– բացատրել Քերթողահայր, «Թագուհի թարգմանութեանց», «Ոսկեդար» տերմինների բացատրությունը<br>– արժևորել հայոց գրերի գյուտը և ոսկոդարյան մշակույթի ձեռքբերումները |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 1 | 62–65 | §15. Մեսրոպ Մաշտոցը և հայոց այբուբենի ստեղծումը / Զանգակ/ |
| | 70–73 | Դաս 1.Մեսրոպ Մաշտոցը և հայոց այբուբենի ստեղծումը,Դպրոցը./ Մանմար/ |
| 1 | 66–69<br>73–75 | §16. Հայ մշակույթի Ոսկեդարը/Զանգակ/<br>Դաս 2.Գրականությունը և պատմագրությունը /Մանմար/ |
| 1 | 70–72 | §17.Գիտության ձեռքբերումները VI–IX դարերում /Զանգակ/ |

| | | |
|---|---|---|
| | 76-78 | Դաս 3.Փիլիսոփայությունը և բնական գիտությունները /Մանմար/ |
| 1 | 72-74<br>78-82 | §18. Ճարտարապետությունը և արվեստը /Զանգակ/<br>Դաս 4.Ճարտարապետությունը և արվեստը /Մանմար/ |
| 1 | Կրկնություն | |

**Բաժին II**
**Հայաստանը զարգացած միջնադարում**
**/18 ժամ/**

**Գլուխ /Թեմա VI – Հայաստանի Բագրատունյաց թագավորությունը**
**/ 6 ժամ /**

| | |
|---|---|
| **Նպատակ** | Նպաստել Բագրատունյաց արքայատոհմի և ենթակա թագավորությունների առաջացման վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, թագավորության հաստատման, զարգացման ընթացքի, անկման հետ կապված կարևոր փաստերը, իրադարձությունները նշանավոր արքաների, գործիչների գործունեությունը բացատրելու, համեմատելու, գնահատելու, արժևորելու, դիրքորոշում արտահայտելու կարողությունների զարգացմանը: |
| **Վերջնարդյունքներ** | *Կարողանա՝*<br>– Թվարկել Բագրատունյաց արքայատոհմի թագավորներին ըստ ժամանակագրական հաջորդականության,<br>– Ներկայացնել և բացատրել ենթակա թագավորությունները, դրանց առաջացման ժամանակը,<br>– Տարբերակել պետականության վերականգնման ներքին և արտաքին նախադրյալները, զարգացման առանձնահատկությունները և անկման պատճառները<br>– Առանձնացնել տնտեսության հիմնական ճյուղերը<br>– Բացատրել թագավորի, իշխանաց իշխանի, հայոց սպարապետի գործառույթները, բանակի կառուցվածքը<br>– Արժևորել պետականության վերականգնման կարևորությունը |

| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
|---|---|---|
| 1 | 78-81 | § 19 Հայոց թագավորության վերականգնումը /Զանգակ/ |
| | 83-87 | Դաս 1-2 Հայաստանի անկախության վերականգնումն ու ամրապնդումը /Մանմար/ |

| | | |
|---|---|---|
| 1 | 82-86 | § 20 Հայաստանը Սմբատ I-ի և Աշոտ Երկաթի օրոք /Զանգակ/ |
| | 87-91 | Դաս 1-2 Հայաստանի անկախության վերականգնումն ու ամրապնդումը /Մանմար/ |
| 1 | 7-91 | § 21 Հայաստանի հզորացումը /Զանգակ/ |
| | 91-96 | Դաս 3 Հայաստանը X դարի 30-ական թվականներից մինչև XI դ. սկզբները /Մանմար/ |
| 1 | 92-95 | § 22 Բագրատունիներին ենթակա հայոց թագավորությունները /Զանգակ/ |
| | 97-100 | Դաս 4 Բագրատունյաց թագավորության քաղաքական մասնատումը / Մանմար/ |
| 1 | 96-98 | § 23 Անիի թագավորության անկումը /Զանգակ/ |
| | 100-103 | Դաս 5 Անիի թագավորության անկումը /Մանմար/ |
| 1 | 98-101 | § 24 Բագրատունյաց Հայաստանի տնտեսությունը և պետական կառավարման համակարգը /Զանգակ/ |
| | 103-108 | Դաս 6 Բագրատունյաց Հայաստանի տնտեսությունը: Պետական կարգը /Մանմար/ |

| Գլուխ /Թեմա VII<br>Հայ ժողովրդի պայքարն օտար նվաճողների դեմ: Զաքարյաններ<br>/3 ժամ/ | | |
|---|---|---|
| **Նպատակ** | | Նպաստել Օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի և Զաքարյանների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերը, իրադարձությունները, գործիչների գործունեությունը բացատրելու, համեմատելու,վերաբերմունք արտահայտելու, արժևորելու կարողությունների զարգացմանը: |
| **.Վերջնարդյունքներ** | | **Կարողանա՝**<br>- առանձնացնել դեպի Հայաստան սելջուկ–թյուրքերի և և մոնղոլների արշավանքների հետ կապված որոշ փաստեր<br>- թվարկել Հայաստանի կիսանկախ թագավորություններն ու իշխանությունները և Զաքարյանների կողմից ազատագրված տարածքները<br>- համեմատել սելջուկների և մոնղոլների արշավանքները և դրանց հետապնդած նպատակները |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 1 | 102-104 | §25. Թուրք-սելջուկները և Հայաստանը /Զանգակ/ |

| | | |
|---|---|---|
| 1 | 105-109 | §26. Հայկական իշխանությունները և թագավորությունները:Զաքարյանների պետությունը /Զանգակ/ |
| | 115-117 | Դաս 2. Հայաստանը Զաքարյանների օրոք /Մանմար/ |
| 1 | Կրկնություն | |
| 1 | Ամփոփում | |
| 1 | 110-113 | § 27.Հայաստանը և մոնղոլները: Պայքար օտար նվաճողների դեմ 13-14-րդ դարերում /Զանգակ/ |
| | 118-121 | Դաս 3.Հայաստանը և մոնղոլները /Մանմար/ |

| Գլուխ /Թեմա VIII /Կիլիկյան Հայաստանը / 5 ժամ / | | |
|---|---|---|
| Նպատակ | | Նպաստել Կիլիկյան Հայաստանի մասին գիտելիքների ձեքբերմանը, Կիլիկիայի հայկական թագավորության կարևոր փաստերը իրադարձությունները, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, համամատելու, դրանց վերաբերյալ դիրքորոշում հայտնելո,ւ Կիլիկիայի հայոց պետության տեղն ու դերը հայ ժողովրդի պատմության մեջ գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը: |
| Վերջնարդյունքներ | | **Կարողանա**<br>- Ներկայացնել և բացատրել Կիլիկիայի տեղը, դիրքը և պատմաաշխարհագրական առանձնահատկությունները, Հայկական իշխանությունների և դրանց առաջացման ժամանակաշրջանը Ռուբինյան իշխաններին և նրանց հետ կապված կարևոր իրադարձությունները, Հեթումյան արքայատոհմի հաստատման ժամանակը, այդ տոհմի որոշ ներկայացուցիչների գործունեությունը, բանակի կառուցվածքը<br>- բնութագրել Ռուբինյան և Հեթումյան նշանավոր գահակալներին,<br>- բացատրել մոնղոլների հետ դաշնակցելու պատճառները<br>- թվարկել տնտեսության հիմնական ճյուղերը, որոշ պաշտոնյաների գործառույթները, |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 1 | 114-116 | § 28. Հայկական պետության ստեղծումը Կիլիկիայում /Զանգակ/ |

| | | |
|---|---|---|
| 1 | 117-119 | § 29. Ռուբինյան պետության ամրապնդումը /Զանգակ/ |
| | 126-130 | Դաս 2. Ռուբինյան իշխանության առաջացումն ու ամրապնդումը / Մանմար/ |
| 1 | 120-122 | § 30. Լևոն Մեծագործ /Զանգակ/ |
| | 131-136 | Դաս 3. Թագավորության հռչակումը:Լևոն Մեծագործ / Մանմար/ |
| 1 | 124-127 | § 31. Հայոց թագավորությունը XIII- XIVդդ /Զանգակ/ |
| | 126-144 | Դաս 4. Հեթումյան արքայատոհմի Հաստատումը: Հեթում I: Թագավորության թուլացումն ու անկումը / Մանմար/ |
| 1 | 128-131 | §. 32 Կիլիկյան Հայաստանի տնտեսությունը և պետական կարգը /Զանգակ/ |
| | 144-148 | Դաս 5. Կիլիկյան Հայաստանի տնտեսությունը: Պետական կարգը/ Մանմար/ |

<table>
<tr><td colspan="3" align="center">Գլուխ /Թեմա IX<br>Հայկական մշակույթը X-XIV դարերում<br>/6 ժամ/</td></tr>
<tr><td colspan="2">Նպատակ</td><td>Նպաստել՝ X-XIV Հայկական մշակույթի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, կարևոր ձեռքբերումները բացատրելու, համեմատելու, վերաբերմունք արտահայտելու, մշակույթի ձեռքբերումները արժևորելու կարողությունների զարգացմանը:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ</td><td>Կարողանա՝<br>- Ներկայացնել և բացատրել X – XIV դդ. հայ մշակույթի ուղղությունները, գործիչներին կրթօջախները, գիտության և արվեստի կարևոր բնագավառները<br>- Բացատրել և արժևորել՝ X-XIV դարերում հայ մշակույթի վերածննդի պայմանները</td></tr>
<tr><td>ժամ</td><td>Զանգակ<br>Մանմար</td><td align="center">Դաս</td></tr>
<tr><td>1</td><td>132-134</td><td>§33. Մշակույթի վերելքը. Կրթական համակարգը /Զանգակ/</td></tr>
<tr><td></td><td>149-151</td><td>Դաս 1. Մշակույթի զարգացման նախադրյալները, կրթական գործը /Մանմար/</td></tr>
<tr><td>1.</td><td>134-136</td><td>§34 .Պատմագրությունը /Զանգակ/</td></tr>
<tr><td></td><td>151-152</td><td>Դաս 2. Գիտությունը /Մանմար/</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | 152-153 | Դաս 2. Գիտությունը /Մանմար/ |
| 2 | 138-139 | §36-37 Գրականությունը և արվեստը /Զանգակ/ |
| | 153-155 | Դաս 3. Գրականությունը : |
| | 139-142 | §36-37 Գրականությունը և արվեստը /Զանգակ/ |
| | 155-159 | Դաս 4. Արվեստը /Մանմար/ |
| 1 | **Կրկնություն** | |

| **Բաժին III**<br>**Հայաստանը ուշ միջնադարում**<br>**(5 ժամ)** | |
|---|---|
| **Գլուխ X,**<br>**Հայաստանը XV դարից մինչև XVII դարի կեսերը: /«Զանգակ»/**<br>**Թեմա/X,**<br>**Հայաստանի կեցությունը XV դարում /«Մանմար»/**<br>**Թեմա XI**<br>**Հայաստանը թուրք-պարսկական պատերազմների շրջանում/«Մանմար»/**<br>**(3 ժամ)** | |
| **Նպատակ** | Նպաստել՝ XV դարից մինչև XVII դարի կեսերը ժամանակահատվածի հայոց պատմության մասին գիտելիքների ձեռքբերմանը, տվյալ ժամանակաշրջանի փաստերը, իրադարձությունները, հասկացությունները, գործիչների գործունեությունը բացատրելու, համեմատելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը: |
| **Վերջնարդյունքներ** | Կարողանա՝<br>- Ներկայացնել և բացատրել XV դարում Հայաստան արշաված օտար նվաճողների մասին, Ամենայն Հայոց կաթողիկոսու-թյունն Էջմիածնում վերահաստատվելու ժամանակը և նախաձեռնողներին, XVI - XVII դդ. թուրք-պարսկական պատերազմների որոշ իրադարձությունների մասին<br>- Բացատրել՝ մելիք, մելիքություն, հյալեթ (վիլայեթ), խանություն, պարոնտեր հասկացությունները:<br>- գնահատել Արևելյան և Արևմտյան Հայաստանում իրենց գոյությունը պահպանած իշխանությունների կարևոր դերը: |

| Ժամ | Էջ | Դաս |
|---|---|---|
| 1 | 146-149 | § 38. Հայաստանը XV դարում- /Զանգակ/ |

| | | |
|---|---|---|
| | 161-164 | Դաս 1 Հայաստանը XV դարի առաջին կեսին /Մանմար/<br>Դաս 2 Ամենայն Հայոց կաթողիկոսության վերահաստատումը Էջմիածնում: /Մանմար/ |
| 1 | 150-153 | § 39. Հայաստանը XVI դարում և XVII դարի առաջին կեսին /Զանգակ/ |
| | 164-167 | Դաս 1 Հայաստանի առաջին բաժանումը Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև: /Մանմար/<br>Դաս 2 Հայաստանը XVII դարի առաջին կեսի թուրք-պարսկական պատերազմների շրջանում: /Մանմար/ |
| 1 | 154-157 | § 40. Հայաստանի ազատագրության պայքարի աշխուժացումը: /Զանգակ/ |
| | 169-174 | Դաս 3. Պայքար Հայաստանի ազատագրության համար XV- XVI դարում: /Մանմար/ |

**Գլուխ XI**

**Ուշ միջնադարի հայկական մշակույթը /«Զանգակ»/**

**Թեմա XII**

**Հայկական մշակույթը XV դարից մինչև XVII դարի առաջին կես/«Մանմար»/**

**/2 ժամ/**

| | |
|---|---|
| **Նպատակ** | Նպաստել՝ XV դարից մինչև XVII դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածի հայկական մշակույթի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, կարևոր ձեռքբերումները բացատրելու, համեմատելու, վերաբերմունք արտահայտելու, մշակույթի ձեռքբերումները արժևորելու կարողությունների զարգացմանը: |
| **Վերջնարդյունքներ** | **Կարողանա՝**<br>– ներկայացնել և բացատրել XV – XVII դդ. հայ մշակույթի առանձնահատկությունները և նշանավոր գործիչներին, գրքերը, կրթական համակարգի և տպագրության ձեռքբերումները, հայկական տպագրության հիմնադրին, ժամանակը, վայրը<br>– համեմատել տպագրության վայրերը և դրանցում տպագրված<br>- արժևորել մշակույթի ձեռքներումները |

| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
|---|---|---|
| 1 | 158-160 | §41 Կրթությունը և տպագրությունը /Զանգակ/ |
| | 180-182 | Դաս 1 Հայկական մշակույթի զարգացման պայմանները: Դպրոցը: Տպագրությունը /Մանմար/ |

| | | |
|---|---|---|
| | 182-185 | Դաս 2.Գիտությունը և արվեստը/Մամմար/ |
| 1 | **Կրկնություն** | |
| 1 | **Ամփոփում** | |

Թեմատիկ աշխատանքներն ուսուցիչն՝ իր հայեցողությամբ, կարող է հանձնարարել թեմաներից հետո կրկնության համար նախատեսված ժամերի հաշվին։

Գործնական աշխատանքների հարցում ուսուցիչն ավելի ազատ է, դրանք կարող է հանձնարարել ցանկացած ժամի ընթացքում, կրկնության ժամերին կամ տանը։

Կիսամյակային աշխատանքները՝ կիսամյակի ավարտին, անհրաժեշտության դեպքում, տեղաշարժելով ամփոփման կամ կրկնության համար նախատեսված ժամերը։

01.09.2022թ.

Ստուգված է։

Ուս. աշխ. գծով փոխտնօրենի

[illegible] [illegible] (Հ. Մելիքսեթյան)։